

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգի մշակման իրավական հիմքերն են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

1.2. Մագիստրատուրայի ընդունելության անցկացման համար ռեկտորի հրամանով և նախագահությամբ ստեղծվում է ընդունող հանձնաժողով՝ ուսումնագիտական գծով պրոռեկտորի, ուսումնական գործընթացների համակարգման բաժնի պետի, ֆակուլտետների դեկանների, իրավախորհրդատուի, գիտական քարտուղարի մասնակցությամբ, անհրաժեշտության դեպքում՝ ընդունող հանձնաժողովի կազմում ամբիոնների վարիչների ընդգրկմամբ:

1.3. Ընդունող հանձնաժողովը, Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի ներկայացմամբ, ուսումնասիրում և քննարկում է մրցույթի հավակնորդների ցուցակները և անցկացնում է մրցույթ ըստ մասնագիտական կրթական ծրագրերի՝ բազային կրթության ընթացքում ուսումնասիրած դասընթացների ցանկի հաշվառմամբ:

1.4. Ռեկտորն ընդունող հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա հրամանագրում է մրցութային հիմունքներով մագիստրատուրա ընդունված դիմորդներին:

1.5. ԵԹԿՊԻ-ի մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի որակավորում ունեցող ՀՀ քաղաքացիները: Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները երկրորդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:

1.6. Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով սեփական նախաձեռնությամբ:

II. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆ ԸՍՏ ՓՈՒԼԵՐԻ

2.1. Մագիստրատուրա ընդունվելու համար դիմում է ներկայացվում ռեկտորի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

ա/ բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկի) պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

բ/ ինքնակենսագրություն (առկայության դեպքում՝ բուհական, հանրապետական, միջազգային մշակութային փառատոների մասնակցության վերաբերյալ տեղեկություններ՝ կից ներկայացնելով ստացված դիպլոմների, գովասանագրերի, այլ պարգևների պատճենները),

գ/ 3 լուսանկար՝ 3x4 չափի,

դ/ հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների, հոդվածների ցուցակ (դրանց առկայության դեպքում),

ե/ անձնագրի պատճեն,

զ/ զինվորական գրքույկի կամ կցագրման վկայականի պատճեն:

2.2. Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելության փաստաթղթերի ընդունումը կատարվում է հունիսի 1-ից 6-ը ներառյալ:

2.3. Երկրորդ փուլով մագիստրատուրայի ընդունելության փաստաթղթերի ընդունումը կատարվում է օգոստոսի 20-ից 27-ը ներառյալ:

III. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3.1. Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով:

3.2. Ընդունելությունն անցկացվում է երկու փուլով:

3.3. Առաջին փուլով անվճար և վճարովի համակարգ կարող են դիմել ԵԹԿՊԻ-ի տվյալ մասնագիտական կրթական ծրագրով ընթացիկ տարվա այն շրջանավարտները, ովքեր ավարտական ամփոփիչ ատեստավորմանը ստացել են «գերազանց» («A») կամ «լավ» («B») գնահատական և նախորդ ուսումնառության ծրագրում միջին որակական գնահատականը «3.00» և ավելի է:

ա/ Առաջին փուլով ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով՝ ներկայացված փաստաթղթերի և դիպլոմի միջուկում գրանցված դասընթացների ամփոփիչ ՄՈԳ-ի հիման վրա՝ ընդունող հանձնաժողովի կայացրած որոշմամբ:

բ/ Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է ընթացիկ տարվա հունիսի 7-ից հունիսի 8-ը ներառյալ:

3.4. Երկրորդ փուլով վճարովի համակարգ կարող են դիմել ԵԹԿՊԻ-ի և այլ բուհերի շրջանավարտները:

ա/ Երկրորդ փուլով ընդունելությունը կատարվում է՝

- բակալավրիատի նույն մասնագիտական կրթական ծրագրի շրջանավարտների համար մրցութային հիմունքներով՝ ներկայացված փաստաթղթերի և դիպլոմի միջուկում գրանցված դասընթացների ամփոփիչ ՄՈԳ-ի կամ գումարային միջին գնահատականի հիման վրա, ինչպես նաև տվյալ մասնագիտական կրթական ծրագրի բակալավրիատի որակավորման վերջնարդյունքների շրջանակներում անցկացվող հարցազրույցի արդյունքների հաշվառմամբ (ստուգված/չստուգված)՝ ընդունող հանձնաժողովի որոշմամբ,
- բակալավրիատի այլ մասնագիտական կրթական ծրագրերով շրջանավարտների համար մրցութային հիմունքներով՝ ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև տվյալ մասնագիտական կրթական ծրագրի բակալավրիատի որակավորման վերջնարդյունքների շրջանակներում անցկացվող հարցազրույցի արդյունքների և

առաջադրանքների կատարման հաշվառմամբ (ստուգված/չստուգված)՝ ընդունող հանձնաժողովի որոշմամբ:

բ/ Տվյալ մասնագիտական կրթական ծրագրի բակալավրիատի որակավորման վերջնարդյունքների շրջանակներում անցկացվող հարցազրույցի թեմաները և առաջադրանքներն առաջարկվում են համապատասխան ամբիոնների կողմից և հաստատվում են որպես սույն կանոնակարգի հավելված:

գ/ Երկրորդ փուլով մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է ընթացիկ տարվա օգոստոսի 28-ից մինչև 30-ը:

3.5. Բանակից զորացրված (ԲԶ) դիմորդների համար նախատեսված անվճար տեղերի մրցույթին կարող են մասնակցել բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող ՀՀ Ազգային բանակում ծառայած դիմորդները՝ ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված տեղերի հաշվին և պայմաններով: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ մրցույթի արդյունքներով:

3.6. Մրցութային հավասար արդյունքի դեպքում մրցույթը շարունակվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.

ա/ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատական կամ միջին որակական գնահատական,

բ/ ամփոփիչ ատեստավորման ավարտական աշխատանքի գնահատական,

գ/ տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայություն,

դ/ ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատական կամ միջին որակական գնահատական:

IV. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո:

Հարցազրույցի թեմաները և առաջադրանքները

021101.00.6 Տեսալսողական արվեստ

021101.02.6 Օպերատորություն ՄԿԾ

Դիմորդը ներկայացնում է լուսանկարչական արվեստ՝ 15x20սմ չափի 20 լուսանկարով (բնանկար, դիմանկար, նատյուրմորտ և այլն), ինչպես նաև կինոարվեստի վերաբերյալ որևէ թեմայի գրավոր վերլուծական աշխատանք (5-10 էջ համակարգչով շարված, թուղթը՝ A4, տառաչափը՝ 12):

- Կինոյի ծագումն ու ձևավորումը:
 - Չարլի Չապլինի արվեստը:
 - Գերմանական կինոէքսպրեսիոնիզմը:
 - Ֆրանսիական կինոավանգարդը:
 - Իտալական նեոռեալիզմը:
 - «Նոր ալիքը» ֆրանսիական կինոյում:
 - Սովետական կինոյի սկզբնավորումը:
 - Կինոգործի հիմնադրումը Հայաստանում:
 - Հայկական վավերագրական կինոն:
 - Հայկական մուլտիպլիկացիոն կինոն:
 - Հայկական կարճամետրաժ կինոն:
 - Հայ օպերատորական դպրոցը:
 - Հայ ժամանակակից կինոռեժիսորներ:
 - Կինոփառատոներ:
- ✓ Садуль Ж. История киноискусства, М., 1957.
 - ✓ Пелешян А. Мое кино, Ер., 1998.
 - ✓ Асмикян С. Тесный кадр, Ер., 1992.
 - ✓ Ֆելինի Ֆ., Կինոարարում, Ե., 1988:
 - ✓ Գալստյան Ս., Հայացք մեր կինոյին. պատմությունը և ներկան, Ե., 2011:

021103.00.7 Կինոարվեստ

021103.01.7 Կինոարվեստ ՄԿԾ

Դիմորդը ներկայացնում է սցենար կամ գրական ժանրի որևէ աշխատանք՝ դրվագների մանրամասն և տեսանելի շարադրմամբ (մինչև 3 էջ՝ համակարգչով շարված, թուղթը՝ A4, տառաչափը՝ 12) և նույն գրական աշխատանքի կամ սցենարի հետ թեմատիկորեն կապված լուսանկարների շարք (ալբոմի տեսքով՝ 10-20 լուսանկար, չափը՝ 15x20) կամ տեսաֆիլմ (3-8 րոպե, DVD), ինչպես նաև կինոարվեստի վերաբերյալ որևէ թեմայի գրավոր վերլուծական աշխատանք (5-10 էջ համակարգչով շարված, թուղթը՝ A4, տառաչափը՝ 12):

- Կինոյի ծագումն ու ձևավորումը:
 - Չարլի Չապլինի արվեստը:
 - Գերմանական կինոէքսպրեսիոնիզմը:
 - Ֆրանսիական կինոավանգարդը:
 - Իտալական նեոռեալիզմը:
 - «Նոր ալիքը» ֆրանսիական կինոյում:
 - Սովետական կինոյի սկզբնավորումը:
 - Կինոգործի հիմնադրումը Հայաստանում:
 - Հայկական վավերագրական կինոն:
 - Հայկական մուլտիպլիկացիոն կինոն:
 - Հայկական կարճամետրաժ կինոն, հեռուստաֆիլմերը:
 - Բեմադրիչների ավագ և միջին սերունդները՝ Ս.Կևորկով, Է.Մելիք-Քարամյան, Ա.Հայ-Արտյան, Գ.Մելիք-Ավագյան, Լ.Իսահակյան, Յու.Երզնկյան, Լ.Վաղարշյան:
 - Հայ ժամանակակից կինոռեժիսորներ:
 - Կինոփառատոներ:
-
- ✓ Садуль Ж. История киноискусства, М., 1957.
 - ✓ Пелешян А. Мое кино, Ер., 1998.
 - ✓ Асмикян С. Тесный кадр, Ер., 1992.
 - ✓ Տելինի Ֆ., Կինոարարում, Ե., 1988:
 - ✓ Գալստյան Ս., Հայացք մեր կինոյին. պատմությունը և ներկան, Ե., 2011:

021301.00.7 Կերպարվեստ

021301.04.7 Թատրոնի, կինոյի և հեռուստաուլորտի նկարչություն ՄԿԾ

Դիմորդը ներկայացնում է վերջին 5 տարվա իր աշխատանքների պորտֆոլիոն (տպագիր կամ էլեկտրոնային կրիչով), ինչպես նաև ներքոհիշյալ թեմաների վերաբերյալ գրավոր վերլուծական աշխատանք (5-10 էջ համակարգչով շարված, թուղթը՝ А4, տառաչափը՝ 12):

- Հին աշխարհի արվեստ (Հռոմ, Հունաստան, Եգիպտոս):
- Վերածննդի ժամանակաշրջանի արվեստ:
- XVII-XVIII դդ. եվրոպական արվեստը:
- Իմպրեսիոնիզմ: Պոստիմպրեսիոնիզմ:
- XX դարի արվեստը (աբստրակցիոնիզմ, կուբիզմ, ֆուտուրիզմ, սյուրռեալիզմ, այլ):
- Հայկական միջնադարյան մանրանկարչություն և ճարտարապետություն:
- XIX-XX դդ. հայկական կերպարվեստ:
- Հայ թատրոնի և կինոյի պատմություն:
- Արտասահմանյան թատրոնի և կինոյի պատմություն:
- Ժամանակակից հայ թատրոնը և կինոն:
- Ժամանակակից արվեստ:
- Հայ բեմանկարիչներ (XX-XXI դդ.):
- Հայկական անիմացիա (XX-XXI դդ.):

- ✓ Всеобщая история искусств, в 6-и тт., М., 1956-1966.
- ✓ История русского искусства, в 13-и тт., М., 1955-1969.
- ✓ Մարտիկյան Ե., Հայկական կերպարվեստի պատմություն, հհ.1-4, Ե., 1971-1987.
- ✓ Драмбян Р. Государственная картинная галерея Армении, М., Искусство, 1982.

021502.00.7 Կատարողական արվեստ

021502.03.7 Պարարվեստ ՄԿԾ

Դիմորդը ներկայացնում է պարային էտյուդ որևէ պարային ժանրում (տևողությունը մինչև 5 րոպե), ինչպես նաև ներքոհիշյալ թեմաների վերաբերյալ գրավոր վերլուծական աշխատանք (5-10 էջ համակարգչով շարված, թուղթը՝ A4, տառաչափը՝ 12):

- Բալետի ստեղծումը:
- Ռուսական բալետի ծագումը:
- Ժան-ժորժ Լովեր:
- Մարիուս Պետիպա. կենսագրությունը և բեմադրական սկզբունքները:
- Ռուսական բալետը XX դարի սկզբին: Այսեդորա Դունկան:
- Ռուսական սեզոններ. Սերգեյ Դյագիլև:
- «Ժիզել». ստեղծման պատմությունը, լիբրետտոն, վերլուծությունը:
- «Դոն Բիշոտ». ստեղծման պատմությունը, լիբրետտոն, վերլուծությունը:
- «Կարապի լիճը». ստեղծման պատմությունը, լիբրետտոն, վերլուծությունը:
- «Ռումեո և Ջուլիետ». ստեղծման պատմությունը, կառուցվածքը, վերլուծությունը:
- Հայկական բալետային թատրոնի ստեղծումը: Հայկական բալետի ծնունդը:
- Պարարվեստի հայ ականավոր գործիչներ. Վ.Խանամիրյան, Ա.Ղարիբյան, Թ.Գրիգորյան:
- Ա. Խաչատրյան՝ «Գայանե», «Մպարտակի». ստեղծման պատմությունը, լիբրետտոն, տարբեր բեմադրությունները:
- Հայկական պետական պարային հումույթներ: Համաշխարհային հայտնի պարային հումույթներ:

- ✓ Ваганова А. Основы классического танца, М., 1963.
- ✓ Новер Ж.-Ж. Письма о танце, Л., 1927.
- ✓ Энтелис Л.А. 100 балетных либретто, М.-Л., 1966.
- ✓ Маркосян А. Страницы истории армянского балета, Ер., 2010.

021503.00.7 Թատերական արվեստ

021503.01.7 Դերասանական արվեստ ՄԿԾ

Դիմորդը ներկայացնում է մենախոսություն որևէ պիեսից (տևողությունը 5-10 րոպե), ինչպես նաև թատերական արվեստի վերաբերյալ որևէ թեմայի գրավոր վերլուծական աշխատանք (5-10 էջ համակարգչով շարված, թուղթը՝ A4, տառաչափը՝ 12):

- Գ.Սունդուկյանի դրամատուրգիան:
 - Հ.Պարոնյանի դրամատուրգիան:
 - Ա.Շիրվանզադեի դրամատուրգիան: Հովհաննես Աբելյան:
 - Վահրամ Փափազյան:
 - Արմեն Գուլակյան: Վարդան Աճեմյան:
 - Մետաքսյա Սիմոնյան: Մհեր Մկրտչյան: Խորեն Աբրահամյան: Սոս Սարգսյան:
 - Ա.Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» պիեսը:
 - Ն.Գոգոլի դրամատուրգիան:
 - Կ.Ստանիսլավսկի:
 - Ա. Չեխովի դրամատուրգիան:
 - Հին հունական թատրոնի առանձնահատկությունները:
 - Վ.Շեքսպիրի ստեղծագործությունը:
 - Ժ.-Բ.Մոլիերի թատրոնը:
 - Հ.Իբսենի դրամատուրգիան:
-
- ✓ Мокульский С. История западноевропейского театра, в 8-и т.т. М., 1936-1988.
 - ✓ История русского драматического театра, в 7-и т.т., М., 1977-1987.
 - ✓ Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմություն. XIX դար, Ե., 1996:
 - ✓ Հախվերդյան Լ., Հայ թատրոնի պատմություն. 1901-1920, Ե., 1980.
 - ✓ Հարությունյան Բ., Հայ սովետական թատրոն 1917-1977թթ., Ե., 1985:

021503.00.7 Թատերական արվեստ

021503.02.7 Ռեժիսուրա ՄԿԾ

Դիմորդը ներկայացնում է իր կողմից բեմադրած տեսարան որևէ պիեսից (տևողությունը 5-15 րոպե) կամ արդեն իրականացված աշխատանքի տեսագրությունը, ինչպես նաև թատերական արվեստի վերաբերյալ որևէ թեմայի գրավոր վերլուծական աշխատանք (5-10 էջ համակարգչով շարված, թուղթը՝ A4, տառաչափը՝ 12):

- Գ.Սունդուկյանի դրամատուրգիան:
 - Հ.Պարոնյանի դրամատուրգիան:
 - Ա.Շիրվանզադեի դրամատուրգիան: Հովհաննես Աբելյան:
 - Վահրամ Փափազյան:
 - Արմեն Գուլակյան: Վարդան Աճեմյան:
 - Մետաքսյա Սիմոնյան: Մհեր Մկրտչյան: Խորեն Աբրահամյան: Սոս Սարգսյան:
 - Ա.Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» պիեսը:
 - Ն.Գոգոլի դրամատուրգիան:
 - Կ.Ստանիսլավսկի:
 - Ա. Չեխովի դրամատուրգիան:
 - Հին հունական թատրոնի առանձնահատկությունները:
 - Վ.Շեքսպիրի ստեղծագործությունը:
 - Ժ.-Բ.Մոլիերի թատրոնը:
 - Հ.Իբսենի դրամատուրգիան:
-
- ✓ Мокульский С. История западноевропейского театра, в 8-и т.т. М., 1936-1988.
 - ✓ История русского драматического театра, в 7-и т.т., М., 1977-1987.
 - ✓ Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմություն. XIX դար, Ե., 1996:
 - ✓ Հախվերդյան Լ., Հայ թատրոնի պատմություն. 1901-1920, Ե., 1980.
 - ✓ Հարությունյան Բ., Հայ սովետական թատրոն 1917-1977թթ., Ե., 1985:

021504.00.7 Պարարվեստի ռեժիսուրա

021504.01.7 Պարարվեստի ռեժիսուրա ՄԿԾ

Դիմորդը ներկայացնում է իր կողմից բեմադրած պարային էտյուդ որևէ պարային ժանրում՝ կատարողների մասնակցությամբ (տևողությունը մինչև 5 րոպե) կամ արդեն իրականացված աշխատանքի տեսագրությունը, ինչպես նաև ներքոհիշյալ թեմաների վերաբերյալ գրավոր վերլուծական աշխատանք (5-10 էջ համակարգչով շարված, թուղթը՝ A4, տառաչափը՝ 12):

- Բալետի ստեղծումը:
- Ռուսական բալետի ծագումը:
- Ժան-ժորժ Լովեր:
- Մարիուս Պետիպա. կենսագրությունը և բեմադրական սկզբունքները:
- Ռուսական բալետը XX դարի սկզբին: Այսեդորա Դունկան:
- Ռուսական սեզոններ. Սերգեյ Դյագիլև:
- «Ժիզել». ստեղծման պատմությունը, լիբրետոն, վերլուծությունը:
- «Դոն Բիշոտ». ստեղծման պատմությունը, լիբրետոն, վերլուծությունը:
- «Կարապի լիճը». ստեղծման պատմությունը, լիբրետոն, վերլուծությունը:
- «Ռոմեո և Ջուլիետ». ստեղծման պատմությունը, կառուցվածքը, վերլուծությունը:
- Հայկական բալետային թատրոնի ստեղծումը: Հայկական բալետի ծնունդը:
- Պարարվեստի հայ ականավոր գործիչներ. Վ.Խանամիրյան, Ա.Ղարիբյան, Թ.Գրիգորյան:
- Ա. Խաչատրյան՝ «Գայանե», «Սպարտակի». ստեղծման պատմությունը, լիբրետոն, տարբեր բեմադրությունները:
- Հայկական պետական պարային հումույթներ: Համաշխարհային հայտնի պարային հումույթներ:

- ✓ Ваганова А. Основы классического танца, М., 1963.
- ✓ Новер Ж.-Ж. Письма о танце, Л., 1927.
- ✓ Энтелис Л.А. 100 балетных либретто, М.-Л., 1966.
- ✓ Маркосян А. Страницы истории армянского балета, Ер., 2010.

021801.00.7 Արվեստի տեսություն և պատմություն

021801.01.7 Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում

Դիմորդը ներկայացնում է մշակութային խնդիրների վերաբերյալ որևէ թեմայի գրավոր վերլուծական աշխատանք (5-10 էջ համակարգչով շարված, թուղթը՝ A4, տառաչափը՝ 12): Անգլերենի կամ ռուսերենի իմացությունը պարտադիր է:

- Մարկետինգի սոցիալական հիմունքները: Հիմնական ձևերը: Մարկետինգի կառավարման գործընթացը: Հայեցակարգը:
- Մարկետինգային ուսումնասիրությունների և մարկետինգային տեղեկատվության համակարգերը:
- Գովազդի հասկացությունը և գովազդի էությունը:
- Բրենդի (ապրանքանիշի) հասկացությունը:
- PR-ի սահմանումը: PR-ի պատմությունը: Հարաբերություններ ՋԼՄ-ների հետ:
- SWOT և SMART վերլուծություններ:
- Հայ թատրոնի և կինոյի պատմություն:
- Արտասահմանյան թատրոնի և կինոյի պատմություն:
- Ժամանակակից հայ թատրոնը և կինոն:
- Ժամանակակից արվեստ:

✓ Дафт Р.Л., Менеджмент, М., 2012.

✓ Котлер Ф., Армстронг Г., Вонг В., Сондерс Дж., Основы маркетинга, М., 2012.

021801.00.7 Արվեստի տեսություն և պատմություն

021801.04.7 Թատերագիտություն ՄԿԾ

Դիմորդը ներկայացնում է թատերական արվեստի վերաբերյալ որևէ թեմայի գրավոր վերլուծական աշխատանք (5-10 էջ համակարգչով շարված, թուղթը՝ A4, տառաչափը՝ 12):

- Գ.Սունդուկյանի և Հ.Պարոնյանի դրամատուրգիան:
 - Ա. Շիրվանզադեի դրամատուրգիան: Հովհաննես Աբելյան:
 - Վահրամ Փափազյան:
 - Արմեն Գուլակյան: Վարդան Աճեմյան:
 - Մետաքսյա Սիմոնյան: Մհեր Մկրտչյան: Խորեն Աբրահամյան: Սոս Սարգսյան:
 - Ա.Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» պիեսը:
 - Ն.Գոգոլի դրամատուրգիան:
 - Կ.Ստանիսլավսկի:
 - Ա. Չեխովի դրամատուրգիան:
 - Հին հունական թատրոնի առանձնահատկությունները:
 - Վ.Շեքսպիրի ստեղծագործությունը:
 - Ժ.-Բ.Մոլիերի թատրոնը:
 - Հ.Իբսենի դրամատուրգիան:
 - Բերթոլդ Բրեխթի «Էպիկական թատրոնը»:
-
- ✓ Мокульский С. История западноевропейского театра, в 8-и т.т. М., 1936-1988.
 - ✓ История русского драматического театра, в 7-и т.т., М., 1977-1987.
 - ✓ Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմություն. XIX դար, Ե., 1996:
 - ✓ Հախվերդյան Լ., Հայ թատրոնի պատմություն. 1901-1920, Ե., 1980.
 - ✓ Հարությունյան Բ., Հայ սովետական թատրոն 1917-1977թթ., Ե., 1985:

021801.00.7 Արվեստի տեսություն և պատմություն

021801.05.7 Կինոգիտություն ՄԿԾ

Դիմորդը ներկայացնում է կինոարվեստի վերաբերյալ որևէ թեմայի գրավոր վերլուծական աշխատանք (5-10 էջ համակարգչով շարված, թուղթը՝ A4, տառաչափը՝ 12):

- Կինոյի ծագումն ու ձևավորումը:
 - Չարլի Չապլինի արվեստը:
 - Գերմանական կինոէքսպրեսիոնիզմը:
 - Ֆրանսիական կինոավանգարդը:
 - Իտալական նեոռեալիզմը:
 - «Նոր ալիքը» ֆրանսիական կինոյում:
 - Սովետական կինոյի սկզբնավորումը:
 - Կինոգործի հիմնադրումը Հայաստանում:
 - Հայկական վավերագրական կինոն:
 - Հայկական մուլտիպլիկացիոն կինոն:
 - Հայկական կարճամետրաժ կինոն, հեռուստաֆիլմերը:
 - Բեմադրիչների ավագ և միջին սերունդները՝ Ս.Կևորկով, Է.Մելիք-Քարամյան, Ա.Հայ-Արտյան, Գ.Մելիք-Ավագյան, Լ.Իսահակյան, Յու.Երզնկյան, Լ.Վաղարշյան:
 - Հայ ժամանակակից կինոռեժիսորներ:
 - Կինոփառատոներ:
-
- ✓ Садуль Ж. История киноискусства, М., 1957.
 - ✓ Пелешян А. Мое кино, Ер., 1998.
 - ✓ Асмикян С. Тесный кадр, Ер., 1992.
 - ✓ Ֆելինի Ֆ., Կինոարարում, Ե., 1988:
 - ✓ Գալստյան Ս., Հայացք մեր կինոյին. պատմությունը և ներկան, Ե., 2011:

021801.00.7 Արվեստի տեսություն և պատմություն

021801.06.7 Սցենարադրամատուրգիական արվեստ ՄԿԾ

Դիմորդը ներկայացնում է որևէ գրական ստեղծագործություն (պատմվածք, նովել, գրական էսյուդ, էսսե), ինչպես նաև ներքոհիշյալ թեմաների վերաբերյալ գրավոր վերլուծական աշխատանք (5-10 էջ համակարգչով շարված, թուղթը՝ A4, տառաչափը՝ 12):

- Եղիշե Չարենց: Պարույր Սևակ:
 - Հրանտ Մաթևոսյան: Աղասի Այվազյան: Պերճ Զեյթունցյան:
 - Գ.Սունդուկյանի և Հ.Պարոնյանի դրամատուրգիան:
 - Ա. Շիրվանզադեի դրամատուրգիան:
 - Ա. Պուշկինի դրամատուրգիան:
 - Ն.Գոգոլի դրամատուրգիան:
 - Ա. Օստրովսկու դրամատուրգիան:
 - Ա. Չեխովի դրամատուրգիան:
 - Հունական դրամատուրգիայի առանձնահատկությունները:
 - Վ.Շեքսպիրի ստեղծագործությունը:
 - Ժ.-Բ.Մոլիերի թատրոնը:
 - Հ.Իբսենի դրամատուրգիան:
 - Կինոյի ծագումն ու ձևավորումը:
 - Հեռուստատեսության սկզբնավորումը: Հայկական հեռուստատեսություն:
-
- ✓ Мокульский С. История западноевропейского театра, в 8-и т.т. М., 1936-1988.
 - ✓ Садуль Ж. История киноискусства, М., 1957.
 - ✓ Հովհաննիսյան Հ., Հայ թատրոնի պատմություն. XIX դար, Ե., 1996:
 - ✓ Գալստյան Ս., Հայացք մեր կինոյին. պատմությունը և ներկան, Ե., 2011: